ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքի ուսուցանումը

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լիանա Լալայան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Խնածախի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

Գորիս 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.Ակնարկ՝ Ա.Բակունցի «Ալպիական մանուշակի» մասին 4

2. «Ալպիական մանուշակի» ուսուցումը 5

3. «Ալպիական մանուշակը» պատմվածքի քնարականությունը 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

Գրականության ցանկ 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Լեզվաբանության և մանկավարժագիտության զարգացման արդի փուլում շատ դրույթների վերանայման պահանջներ են առաջ քաշվում, և հարցադրումների այս համատեքստում անհրաժեշտ է նոր մոտեցում հանդես բերել գրականության ուսուցման մեթոդաբանության նկատմամբ: Աշակերտների աշխարհայացքի ձևավորման, նրանց հոգու և մտքի հարստացման, գեղարվեստական մտածողության զարգացման գործում անգնահատելի է գրականության դերը: Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքի նորովի ուսուցման կարևորությունը ընդգծում ենք այն առումով, որ սովորողները հաճախ նշանակություն չեն տալիս խոսքի պատկերավորությանը, ստեղծագործության գեղարվեստական արժանիքներին, նկարագրություններին, լեզվին և ոճական առանձնահատկություններին:

Հետազոտության նպատակն է միջին դպրոցում ուսուցման ակտիվ և փոխներգործող մեթոդների, հաղորդակցական ու տեղեկատվական միջոցների և ինքնատիպ մի շարք աշխատանքների կազմակերպման միջոցով ցույց տալ՝

- նյութի դասավանդման ժամանակ ուսուցչի մեթոդամանկավարժական մոտեցումները,
- միջին դպրոցի սովորողների մտածողության, երևակայության, ստեղծագործական կարողությունների զարգացումը,
- սովորողների մեջ զգայական-գեղագիտական ընկալումը,
- սովորողների կապակցված խոսքի, բառապաշարի հարստացման, տրամաբանական և ստեղծագործական մտածողության ձևավորման ուղիներն ու միջոցները:

Առաջադիր նպատակով պայմանավորված հետազոտության **խնդիրն է** մանկավարժական գիտափորձի միջոցով պարզել, թե ինչպիսին են՝

ա) սովորողների ստեղծագործության զգայական գեղագիտական ընկալումը,

բ) բանավոր խոսքի զարգացման մակարդակը,

գ) վերլուծելու, համադրելու, եզրահանգումներ անելու կարողությունները

դ) մշակել արդյունավետ ուսուցման պայմաններ, որոնք կնպաստեն գիտելիքների խորապես յուրացմանը,

ե) այնպես կազմակերպել գործունեությունը, որ այն առաջացնի ընդհանուր անհանգստություն, ապրումներ, նպաստի սոցիալական հմտությունների ձևավորմանը:

Հետազոտության օբյեկտը Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքի ուսուցման գործընթացն է միջին դպրոցում:

Հետազոտության առարկան ուսուցման գործընթացում սովորողների մոտ զգայական-գեղագիտական ընկալման ձևերի ուսուցանումն է «Ալպիական մանուշակ» պատմվածքի միջոցով:

Հետազոտության մեթոդներների կիրառվել են դիտումը, մանկավարժական գիտափորձը (արձանագրող, հավաստող և ձևավորող տեսակներով), վերլուծությունը, ուղորդված ընթերցանությունը, շարադրանքը, հարց ու պատասխանը:

1.Ակնարկ՝ Ա.Բակունցի «Ալպիական մանուշակի» մասին

«Ալպիական մանուշակը» պատմվածքը, որի մասին գրականագետ Ս. Աղաբաբյանը առաջ է քաշում այն տեսակետը, թե այն «որոշ իմաստով նվիրված է գեղագիտության հիմնական առարկային՝ արվեստի և կյանքի փոխհարաբերությանը»,[1] Բակունցի առաջին գործերից է: Այստեղ արտահայտվել են նրա արձակի էական հատկանիշները՝ ուրույն աշխարհազգացումը, բարոյական ու գեղագիտական ըմբռնումների ինքնատիպությունը, նրա արվեստի փիլիսոփայությունը, անմնացորդ սերը հայրենիքի ու մարդու հանդեպ:

[1] Ս.Աղաբաբյան, Ակսել Բակունց, Երևան, 1963, էջ 82:

Ստեղծագործական մեծ վերելքի պահին, անդադար մաքառումների մեջ նրա վրա իջավ բախտի ծանրագույն հարվածը: Ոչինչ չօգնեց, ո՛չ վաստակը, ո՛չ գաղափարական հարստությունը, ո՛չ ինքնախարազանումը: Վերջին դիմում-նամակում նա խոսում է իրեն տանջող խոհերի մասին, կյանքի ու խոսքի կարոտի մասին: Այդ օրերին նրան հասկանում և հավատում էին քիչ մարդիկ… Նրան հասկանում էր Եղիշե Չարենցը: Նա պաշտպանում է Բակունցի անմահ արվեստը՝ համեմատելով այն հայ հնագույն հուշարձանների հետ, նրանում տեսնում է իր ժողովրդի ոգու և երազների հավերժական փայլը:

2. «Ալպիական մանուշակի» ուսուցումը

Նախքան ուսուցմանն անցնելը աչքի ենք անցկացնում բնագիրն ու գրականագիտական-քննադատական աղբյուրները, առանձնացնում ենք բոլոր այն նյութերն ու աղբյուրները, որոնք օգտագործվելու են թեմայի ուսուցման ողջ ընթացքում: «Ալպիական մանուշակ» պատվածքի ուսումնասիրությանը տրամադրում ենք երկու դասաժամ: Առաջին դասաժամի սկզբում ներկայացնում ենք թեմայի վերնագիրը, պատմվածքի ստեղծման պատմությունը:

Պատմվածքը գրել է 1925-27 թթ. և նվիրված է Արփենիկ Չարենցի հիշատակին: Գրողի՝ Մեղրու շրջան կատարած ուղևորության հետ է կապված պատմվածքի մտահաղացումը: Այդ ուղևորությունը Բակունցը կատարել է իր բարեկամի՝ երկրաբան Տիգրան Զրբաշյանի հետ միասին: Նրանք մի երրորդ անձի ուղեկցությամբ այցելել են Մեղրու շրջանի մի շարք վայրեր, այդ թվում՝ ավերակ բերդեր: Պատմվածքում ծովափի հիշատակված կինը Բակունցի ընկերուհին է եղել, նա արևելագետ Ժենյա Գյոզալյանն է, որի համար էլ Բակունցը առաջին անգամ կարդացել է պատմվածքը:

Դասաժամի 20 րոպեն հատկացնում ենք պատմվածքի գեղարվեստական ընթերցանությանը: Այդ ընթացքում սահիկաշարի միջոցով ցուցադրվում է նախապես

պատրաստված նյութը: Հնչում է մելամաղձոտ երաժշտություն, էկրանի վրա ցուցադրվում են Կաքավաբերդը, լեռներն ու ժայռերը, Բասուտա գետը:

Կարծում ենք, որ գրականության ամեն մի ուսուցիչ իսկապես դժվար վարժանքով պետք է հասնի այն բանին, որ աշակերտները կարողանան ընթերցել արտահայտիչ ու վարժ: Չէ՞ որ դա այնքան ժամանակ, այնքան նվիրվածություն ու նրբություն, «սև» աշխատանք է պահանջում:

Նպատակ ունենք լսել տալու ոչ միայն **ինչը,** այլև **ինչպեսը** և **ինչուն**: Կարծում ենք որ մի շարք երկերի առաջին ընթերցման մենաշնորհը պետք է պատկանի ուսուցչին: Նման գործերը բնավ էլ նախօրոք չպետք է պարտադրել կարդալ: Ուսուցչի առաջին ընթերցանությունը (խոսքը գեղարվեստական ընթերցման մասին է), եթե ոչ ամեն ինչ, ապա շատ բան է որոշում: Ընթերցելիս ոչ մի բացատրություն-մեկնաբանություն չենք տալիս, ամեն ինչ՝ հիացմունք ու հույզ, խորհրդավորություն ու հանդիսավորություն, կարեկցանք ու զայրույթ և այլն, փորձում ենք արտահայտել դիմախաղի ու ձայնի երանգ-ելևէջներով: Դա աշակերտներին մտորել է տալիս, համակում գեղեցիկ զգացումներով: Այնուհետև սկսում ենք բնագրային աշխատանքներով բացահայտել մի շարք մանրամասներ: Դասարանը բաժանում ենք չորս խմբի, տալիս ենք թերթիկներ՝ նախօրոք գրված հարցերով: Առաջին խումբը պատասխանում է հետևյալ հարցին. «Ինչպե՞ս է գրողը նկարագրում աշխարհը, Կաքավաբերդը, ալպիական գեղեցկությունները»: Երկրորդ խմբին հանձնարարում ենք տալ նկարչի և հնէաբանի համեմատական բնութագիրը (կարելի է կազմել T-աձև աղյուսակ), երրորդ խմբին՝ ներկայացնել հերոսուհու և ծովափի կնոջ նկարագրությունը, խանդի տեսարանը, չորրորդ խմբին՝ խոսել պատմվածքի լեզվաոճական առանձնահատկությունների, պատկերավորման միջոցների մասին:

Բնագրային աշխատանքներից ելնելով՝ նկատում ենք, որ նրանք ճիշտ են ըմբռնում մուտք-բնապատկերների իմաստը, հակադրությունները, իրականի ու երևակայականի զուգորդումները, անցյալի ու ներկայի, հնի ու նորի խորհրդանիշերը: Այդ հակադրություն-զուգորդումներն են՝ ավերված բերդն ու կենդանի (մտովի

կենդանացրած) բերդը, բերդի լռությունն ու գետի աղմուկ-շառաչը: Աշակերտները առանձնացնում են և ներկայացնում հետևյալ հատվածները.

«Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա»[2]:

«Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հոկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները»[3]:

«Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում.նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից ու ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը կեռ թուր, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ:

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին»[4]:

Անդրադառնում են նաև սրանց հաջորդող այլ՝ մարդկային կյանքի պատկերներին՝ քարաժայռերի վրա թառած տներ, հորանջող շինական, ամեն գարնան ծաղկող ալպիական մանուշակ: «Քանի՛ սերունդ….»[5] արտահայտությունը ժամանակի անհաշվելի տեսականությունն է ընդգծում, մարդկանց կյանքի և կենցաղի միապաղաղությունը:

---

[2] Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986, էջ 135:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 136:

Երկրորդ խմբի աշակերտները գտնում են այն հատվածները, որոնք նկարագրում են նկարչին ու հնէագետին, նրանց գործողությունները: «Նկարչի ամբողջ հարստությունը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը: Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամռապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը: Ֆետրե գլխարկով մարդը նկարեց պարիսպների փլվացքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը…Հնագետը չէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ:

Նրա կոշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ: Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկար ոչինչ կենդանի և ոչ մի բզեզ: Նա պոկոտում էր քարերին փաթաթված բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը: Նկարիչը տետրի նոր էջի վրա նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արանքում, քարե արծվի բույնը, պարսպի ոտների տակ՝ ալպիական մանուշակներ»[6]:

Աշակերտները եզրակացնում են, որ հնէագետի տեսած գեղեցկությունը անկենդան է ու անշունչ, իսկ նկարչի տեսած գեղեցկությունը՝ կենդանի:

Երրորդ խումբը նկարագրում է չքնաղ անծանոթուհուն և զուգահեռ տանում ծովափի կնոջ հետ: Մանուշակագույն էին ծովափի կնոջ աչքերը, ծովն ասես ափ էր շպրտում ալպիական ծիրանագույն մանուշակներ, իսկ նկարչի քաղած և ծոցատետրի մեջ զետեղած մանուշակը և՛ կարոտ էր, և՛ խռովք, և՛ սփոփանք: Նկարիչը նկարում է գեղեցկուհուն, որը փաստորեն ակամայից է բնորդում: Այդ ամենը խանդ է առաջացնում նրա ամուսնու մեջ:

Ո՞րն է գեղջկուհու մեղքը: Հնձվորը սխա՞լ է վարվում, երբ ծեծում է կնոջը: Աշակերտները տալիս են այդ հարցերի հիմնավոր պատասխանները՝ մեջբերումներ անելով բնագրից: Հնձվորը սխալ է վարվում, երբ ծեծում է կնոջը բայց հոգեբանորեն նրան էլ կարելի է հասկանալ. խանդոտ հնձվորը չէր կարող լուռ ու մունջ տանել իր օջախում իր բացակայությամբ անծանոթ մարդկանց որոշ քայլերը՝ երեխային

[6] Նույն տեղում:

արծաթե դրամ, կոնսերվի տուփեր տալը, մինչև անգամ կնոջը նկարելն ու նկարը ծոցը դնելը:

Աշակերտները եզրակացնում են՝ գրողը ստեղծում է երկրի բնության և դաժան կենցաղի պատկերը: Դաժան բնություն, դառը կյանք, անսահման խեղճություն, որ ծանրացնում է մարդկանց բախտը, աղավաղում գեղեցկությունը:

Չորրորդ խումբը բնագրից դուրս է գրում պատկերավորման միջոցները:

Տնային առաջադրանք: Հանձնարարում ենք պատմել պատմվածքի բովանդակությունը և նկարագարդել պատմվածքը:

Երկրորդ դասաժամը նվիրում ենք պատմվածքի կառուցվածքային վերլուծությանը, բացահայտում գաղափարը: Դասարանում վահանակին փակցնում ենք շնորհալի աշակերտների նկարագարդումները: Ապա աշակերտներին հրավիրում ենք ակտիվ զրույցի՝ պատմվածքի ժանրային առանձնահատկությունների, վերնագրի և «Ալպիական մանուշակ» խորհրդանիշի շուրջ: Աշակերտները պատասխանում են այս հարցին. «Գրականության մեջ «Ալպիական մանուշակը» ընդունվում է և՛ որպես պատմվածք, և՛ որպես նովել: Ձեր կարծիքով ի՞նչ է այն»: Աշակերտները հանգում են հետևյալին. այս ստեղծագործության մեջ նկարագրությունները, խորհրդածություններն ավելի շատ են, քան գործողությունները: Շատ են նաև քնարական շեղումները, երկն ունի սրընթաց ավարտ: Այն, ուրեմն, քնարաշունչ նովել է:

3. «Ալպիական մանուշակը» պատմվածքի քնարականությունը

Ինչպե՞ս է գրողը նկարագրում աշխարհը, Կաքավաբերդը, ալպիական գեղեցկությունները: «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում»- այսպես է սկսվում նովելը, և բացվում է մի ինքնատիպ աշխարհ: Հետևում է խստաշունչ բնության էպիկական պատկերը: Այս բնությունը քնքշացնում է միայն մի ծաղիկ՝ ալպիական մանուշակը՝ «ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի

գույն»[7]: Խստաշունչ նկարագիրը հիշեցնում է նաև կյանքը: Կաքավաբերդի անկրկնելի պատկերը ընթերցողին տանում է դեպի մարդկանց աշխարհը: Ովքե՞ր են ապրում այդ բնության մեջ, նման չե՞ն արդյոք նրանք ալպիական մանուշակի ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին, որին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ծիրանագույն բուրաստան:

Բակունցը պատկերում է մարդկանց մուտքը դեպի այդ անառիկ սարերը: Եկվորներից մեկը ներքև է նայում, մյուսը՝ վերև, մեկը գերեզմանաքարերին է նայում, փնտրում ինչ-որ կորցրած բան, մյուսը որոնում է գեղեցկություն: Սրանց ավելանում է հնձվորը. առաջինները եկել են ինչ-որ բան որոնելու այս աշխարհում, իսկ հնձվորը յուրովի մտածում է, թե ովքեր են և ինչ են որոնում ավերակներում. «Ի՜նչ կլիներ, եթե ինքը գտներ գանձը: Քանի անգամ է նա նստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը: Եթե իմանար, ապա գանձերը կլինեին նրա արխալուղի գրպանում: Քանի՜ կով կառներ...»[8]: Ստեղծվում են երեք բնավորություն, ընթերցողը մղվում է դրամատիկ ապրումների ոլորտը: Երևան է գալիս ամենաուժեղը՝ կնոջ կերպարը: Հեռավոր Կաքավաբերդում, կարիքի ու խավարի մեջ, աշխարհից կտրված սարերի վրա ապրում է մի հրաշք գեղեցկություն, ալպիական մանուշակի նման գեղեցիկ մի կին: Գեղեցկություն որոնողը շտապ նկարում է կնոջը: Նա զարմանալի նման է մի ուրիշ կնոջ: Որտե՞ղ է տեսել, հնարավոր է այդքան նմանություն… Նույնքան բարակ մեջքով, նույնպիսի աչքերով, բարձրահասակ: Նա տեսել է նման մի կնոջ հեռվում, ծովափին. «Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի՜ քայլել, չի՜ նստել մխացող աթարի առաջ»[9]: Եվ ահա հեռավոր նահապետական գյուղում՝ վրանի տակ՝ խավարի մեջ, բոբիկ ոտքերով մի կին փչում է ծխացող կրակը… Նա զարմանալի նման է ծովափի կնոջը, բայց որքան տարբեր է նրանց կենցաղը, ճակատագիրը, շրջապատող մթնոլորտը: Մեկը նստած է օջախի առաջ, խառնում է կրակը, աթարներն իրար քաշում, ծխի մեջ թվում է մի քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի

[7] Նույն տեղում, էջ 135:
[8] Նույն տեղում, էջ 138:
[9] Նույն տեղում, էջ 140:

շարժումները գուշակող: Մյուսը ազատության մեջ էր, հեռավոր ծովափին: Նկարիչը թղթին է հանձնում կնոջ պատկերը: Միայն մի պահ այդ գեղեցիկ կինը, որին գուցե այլ պարագայում բախտը ժպտար, մտնում է կյանքի շրջանը: Միայն մի անգամ նա զգում է ուրիշ աշխարհի շունչ:

Ինչպե՞ս է վերջանում պատկերը: Մարդիկ թեյ են խմում և գնում, բայց դրաման շարունակվում է… Օտարականները գալիս են ու գնում, իսկ գյուղի մարդիկ կրկին մտնում են մռայլ տարերքի մեջ: Հնձվորը վերադառնում է աշխատանքից դառնացած և հոգնած: Մռայլ տրամադրությունից և հոգնությունից նա կատաղում է: Այս բոլորին ավելանում է երեխայի միամիտ ակնարկը:

Բակունցը շատ ուժեղ է նկարագրում վայրենի խանդի բռնկումը: «Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի սրտում: Աչքերը լայնացան, նա գունատվեց: Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը: Հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը: Այդ ամենը կատարվեց մեկ վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակը անասելի թափով իջավ կնոջ թիկունքին: Սուրմանները զրնգացին, ցնցվեցին կնոջ երկար ծամերը: Մահակի ջարդված ծայրը թռավ ծալքի վրա: Կինը աղաղակ չհանեց, այլ ցավից գալարվեց: Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու…»:[10] Ահա այսպես, այս թշվառ անկյունը մի պահ կապվում է մեծ աշխարհի հետ և նորից խխունջի պես ետ քաշվում իր պատյանը. «Հետո Կաքավաբերդի գլխին լռություն իջավ: Օջախներում հանգավ կրակը: Եղավ խավար գիշեր: Գազանների ահից շները կուչ եկան վրանների առաջ: Ոչխարը պառկեց կանաչի վրա: Խսիրի վրա մեկնվեց և կինը, թաղիքի տակ ծածկելով տղային»[11]:

Այս նովելում Բակունցը նուրբ խոսք է ասում իր արվեստի կենսունակության մասին. «Ուզում եմ, որ այս անզարդ տողերը մնան այնքան, որքան կմնա մեր

[10] Նույն տեղում, էջ 143:
[11] Նույն տեղում:

քարափը»[12]: Նա իրոք հյուսում է անզարդ, խորունկ, բնական տողեր՝ մարդու բախտի, աշխարհի և մեծ բնության մասին: Վերջին պատկերն էլ միանում է կենսափիլիսոփայությանը. «Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների վրա, և մակաղած ոչխարների բրդի վրա նստեց գիշերային խոնավությունը: Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթի վրա: Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջքների մեջ, և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ»[13]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանրակրթական դպրոցում գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը համակողմանի և ներդաշնակ զարգացած անձնավորության դաստիարակությունն է, որը մեծապես նպաստում է նոր սերնդի՝ գեղեցիկի նկատմամբ զգացողության առաջ բերելուն, սովորեցնում է տեսնել, հասկանալ ու գնահատել գեղեցիկը և վսեմը թե՛ բնության մեջ, թե՛ կյանքում և թե՛ արվեստի բնագավառում: Այդ ամենը մարդու մեջ հակում է առաջ բերում իր կյանքի ընթացքում մշտապես հետաքրքրվելու արվեստի նորանոր արժեքներով և հասնելու գեղեցիկի ավելի նուրբ ու խոր զգացողության ու լիակատար ըմբռնման:
2. «Ալպիական մանուշակը» պատմվածքը ուսուցանելիս, դասը ամբողջությամբ ծառայեցնում ենք աշակերտների հոգեկան աշխարհը, զգացմունքները հարստացնելու և կրթելու, նրանց գեղեցիկ խոհերով համակելու նպատակին: Դրանով, միևնույն ժամանակ, խորացնում ենք սաների գիտելիքները՝ Բակունցի գեղագիտական հայացքների, մարդկային հոգու գեղեցկությունների հայտնաբերման, կյանքը հոգեբանական հայացքով դիտելու կարողության և

[12] Ա. Բակունց, Երկերի ժողովածու, հ. 1-ին, 1976, էջ 248:
[13] Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986, էջ 143:

լիրիզմի վերաբերյալ, զարգացնում ու կատարելագործում ենք նրանց լեզվական կուլտուրան, ճաշակը:

3. Պատմվածքի ուսուցման ընթացքում ծավալած աշխատանքի շնորհիվ աշակերտների համախմբված և անհատական պրպտումները, ապրումակցելը, զանազան մեթոդների կիրառությունը ի հայտ բերեցին սովորողների իրական հնարավորությունները, հետաքրքրությունների շրջանակը, թե ինչպես է յուրաքանչյուրը կարողանում զգալ ստեղծագործությունը: Առաջադրված հստակ պահանջների, հարցերի ու խնդիրների կատարման հետևանքով հաջողվել է հասնել դրված նպատակին:
4. Տեխնիկական միջոցների կիրառումը ևս մեծապես նպաստեց աշակերտների կողմից ստեղծագործության զգայական-գեղագիտական ընկալմանը:
5. Տեքստային աշխատանքի ժամանակ անծանոթ բառերի բացատրությունը գտնելը, գեղարվեստական երանգ ունեցող բառերի ու արտահայտությունների առանձնացումը, սովորողների ինքնուրույն որոնողական աշխատանքը նպաստեցին նրանց բառապաշարի զարգացմանը, որը նաև հիմք կդառնա կապակցված խոսքի ձևավորմանը:

Գրականության ցանկ

1. Ս.Աղաբաբյան, Ակսել Բակունց, Երևան, 1963:
2. Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986:
3. Ա. Բակունց, Երկերի ժողովածու, հ. 1-ին, 1976:
4. Դ. Գասպարյան, Ակսել Բակունց, Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2009:
5. Հր. Թամրազյան, Սովետահայ գրականության պատմություն, Երևան,1984:
6. Ռ. Իշխանյան, Ակսել Բակունցի կյանքն ու արվեստը, Երևան, 1974